

նաչնորհումները , աղատութիւններն ու ապահարկը , որոնք նախորդ թագաւորներէ մինչեւ Մեղ հասած են եւ Մենք ալ հաստատած ենք , որպէս զի նոյն Մաղրիգ քաղաքն՝ իր բնակիչներով միասին՝ աւելի հարստանայ եւ աւելի պատիւ ստանայ :

Նկատելով որ յիշեալ Մաղրիգ քաղաքի գործերը վարող ու անօրինող Վարչութիւնը , թագապետները , քաղաքապահը , ասպետները , սեպուհներն ու ազնուականները մեզ խնդրագիր մը զրկեցին ձեռամբ իրենց փոխանորդներուն՝ մեր ճորտ Մաղրիցի Դիէզո Ֆէրրանդէզի , Լագոցի Ալվար Ֆէրրանդէզի , Գոնզալո Բերմուդէզի ու Յովհան Ռոզրիզի , եւ այդ խնդրագրով յայտնեցին — թէ Մենք յիշեալ Մաղրիգ քաղաքն իր սահմաններով Հայոց թագաւորին տուեր ենք , թէ ասիկա շեամսակար է քաղաքին եւ հակառակ՝ Մեր նախորդ թագաւորներէ ու Մեզմէ արուած առանձնաչնորհումներու , եւ որովհետեւ յիշեալ քաղաքը մեր արքայական գահին պատկանած է միշտ՝ իբր շնորհ խնդրեցին , որ անոր ունեցած առանձնաչնորհումներն ու ապահարկը պահենք անփոփոխ , եւ թէ ինչպէս միշտ՝ ասկէ ետք ալ նոյն քաղաքը պատկանի մեր արքայական գահին :

Այս բանին հաւանութիւն կուտանք եւ վերը յիշուած խնդրագրին կը պատասխանենք , որ Մենք նոյն քաղաքն ա՛յն պատճառով Հայոց թագաւորին տուինք , որովհետեւ անիկա Մեզ՝ մեր թագաւորութեան զիմեց եւ մեզմէ օգնութիւն խնդրեց , ինչու որ անիկա իր թագաւորութիւնը կորսնցուց կաթողիկէ սուրբ հաւատքը պաշտպանելով , այդ քաղաքը մեզ պատկանած արուարձաններովը , բոլոր եկամուտներովը , սուրբերովը ու իրաւունքներովը տուինք անոր՝ իր կեանքի մնացած մասն անցընելու համար , բայց Մեր նպատակն ու փափագն էր եւ է , որ երբ Հայոց թագաւորին՝ յիշեալ քաղաքին ու արուարձաններուն վրայ ունեցած իշխանութիւնն իր մահով վերջանայ , անմիջապէս եւ ընդ միշտ նոյն քաղաքն իր արուարձաններով միասին մեր թագաւորական գահին մնայ եւ պատկանի : Արդ՝ Մեր ու իմ գահաժառանգ երէց զաւկիս՝ արքայազն տէր Ներիկի կողմէ , նոյնպէս եւ մեր ապագայ սերնդի կողմէ կը խոստանանք եւ կերպնունք մեր թագաւորական ուխտին վրայ՝ ո՛չ յիշեալ քաղաքը , ո՛չ իր արուարձաններն եւ ո՛չ անոր մէկ մասը ձեռքէ չհանել երբեք եւ չտալ ուրիշ մէկի մը , ո՛վ ալ ըլլայ այն անձը , ուզէ՛ մեր երկրացի կամ օտարական . այլ անիկա միշտ պատկանի մեր թագաւորական գահին , ինչպէս որ ասանկ լաւագոյն եւ աւելի կատարեալ եղած է միշտ , եւ ինչպէս որ այս մասին յիշեալ Վարչութեան ձեռք գտնուած դաշնագրերն ու շնորհաթղթերը